


1. Հաշվե՛ք արտահայտությունն արժեքը. $\frac{\sqrt{25+70+49}}{2^4-2^2}$:

- 1) 1 2) 2 3) $\frac{1}{2}$ 4) 4

2. Տորթի կրեմ ստանալու համար պետք է կարագը խառնել խտացրած կաթի հետ, ընդ որում 3 : 7 հարաբերությամբ: Ամենաշատը քանի՞ գրամ կրեմ է հնարավոր պատրաստել ունենալով 240գ կարագ և 490գ խտացրած կաթ:

- 1) 240 2) 730 3) 700 4) 490

3. Քանի՞ եռանկյուն կա նկարում:



- 1) 32 2) 34 3) 36 4) 38

4. Քանի՞ եռանիշ թիվ կա, որը 11 անգամ մեծ է իր թվանշանների գումարից:

- 1) 0 2) 11 3) 198 4) 1

5. Շաբաթվա ի՞նչ օր կլինի սեպտեմբերի 8-ը, եթե հուլիսի 1-ը եղել է երեքշաբթի:

- 1) երկուշաբթի 2) երեքշաբթի 3) հինգշաբթի 4) կիրակի

6. ABC ուղղանկյուն եռանկյան ուղիղ անկյան գագաթից տարված միջնագիծը 2 անգամ մեծ է նույն գագաթից տարված բարձրությունից: Գտե՛ք ABC եռանկյան մեծ սուր անկյան աստիճանային չափը:

- 1) 15° 2) 30° 3) 60° 4) 75°

7. Ի՞նչ թվանշանով է ավարտվում առաջին 2024 կենտ թվերի գումարը:

- 1) 6 2) 5 3) 0 4) 8

8. Քանի՞ քառանիշ թիվ է հնարավոր կազմել օգտագործվելով 1, 2, 3, 4, 5 թվանշանները՝ յուրաքանչյուրը առավելագույնը մեկ անգամ, որ ստացված թիվը բաժանվի 12-ի:

- 1) 2 2) 8 3) 6 4) այլ պատասխան

9. Թվին գումարեցին իր կրկնապատիկից 6-ով մեծ թիվ, և ստացվեց սկզբնական թվից 2 -ով մեծ թվի եռապատիկը: Քանի՞ այդպիսի թիվ կա:

- 1) 1 2) 0 3) անվերջ քանակության 4) այլ պատասխան

10. Գտնել $19 \cdot 9^{100} - 6$ թիվը 7-ի բաժանելիս ստացվող մնացորդը:

- 1) 4 2) 2 3) 6 4) 5

11. Նկարում պատկերված ուղղանկյունը բաժանված է 4 ուղղանկյունների, որոնցից 3-ի մեջ գրված են իրենց պարագծերը: Գտե՛ք չորրորդ ուղղանկյան պարագիծը:

6	?
9	14

- 1) 8 2) 9 3) 10 4) 11
- 12.** Հրաչևն ունի 7 գիրք, որոնցից 3-ը կանաչ են, 2-ը կապույտ են, իսկ մյուս 2 կարմիր են: Նա ուզում է գրքերն իրար կողք դասավորել այնպես, որ նույն գույնի գրքերը լինեն իրար կողք (միագույն գրքերի միջև այլ գույնի գիրք չլինի): Քանի՞ եղանակով է կարող Հրաչը դասավորել գրքերը:
- 1) 36 2) 144 3) 72 4) 288
- 13.** Գրատախտակին գրված են 1, 2, ..., 10 թվերը: Արամն ընտրում է երկու թիվ, և դրանք փոխարինում դրանց տարբերության մոդուլով: Այնուհետև նա նույն բանը կատարում է նոր գրված թվերի հետ այնքան, մինչև գրատախտակին մնա գրված մեկ թիվ: Գտե՛ք, թե ի՞նչ թիվ է գրված:
- 1) 1 2) 9 3) 3 4) պատասխանը միարժեք չէ
- 14.** Թվի կրկնապատիկն ունի 20 տարբեր բաժանարար: Ամենաշատը քանի՞ բաժանարար կարող է ունենալ այդ թիվը:
- 1) 10 2) 16 3) 19 4) այլ պատասխան
- 15.** Խանութը բացվելու 2-րդ տարում ունեցավ 100%-ով ավելի վաճառք, քան առաջին տարում, իսկ երրորդ տարում՝ 50%-ով ավելի, քան երկրորդ տարում: Քանի՞ տոկոսով պետք է չորրորդ տարում վաճառքը գերազանցի երրորդ տարվա վաճառքին, որպեսզի չորրորդ տարվա վաճառքը կազմի երկրորդ տարվա վաճառքի եռապատիկը:
- 1) 50% 2) 100% 3) 66. (6)% 4) 75%
- 16.** Դիցուք x_1 և x_2 թվերը $3x^2 - 12x + 6$ բառակուսային եռանդամի արմատներն են: Գտե՛ք $x_1^3 + x_2^3$ -ի արժեքը:
- 17.** Եռանկյան A , B և C գագաթներին հարակից արտաքին անկյունների աստիճանային չափերը հարաբերում են ինչպես 2 : 3 : 4: Գտե՛ք եռանկյան B ներքին անկյան աստիճանային չափը:
- 18.** Գտե՛ք փոքրագույն բնական թիվը, որը 5-ի բաժանելիս ստացվում է նույն մնացորդ, ինչ այդ թվի կրկնապատիկն 8-ի բաժանելիս:
- 19.** Քանի՞ եռանիշ թիվ կա, որ բաժանվում է 3-ի կամ 7-ի:
- 20.** Հաշվե՛ք բոլոր երկնիշ թվերի գումարը, որոնց թվանշանների արտադրյալը 2-ով փոքր է դրա թվանշանների գումարի կրկնակիից: